

3399

1920

3KCM

V-58

"B 2001

010

010

40728-աԿ.

Հ. ՈՒՍԱՍՏԱՆԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԻՍԵԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԷՐ!

329.154 (47925)
0-57

194

Օ. ՍԿԱՐ

ՅԱՄԱ

0-58

ԿԿՐ

═══════ ԴԷՊԻ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿԸ ═══════

30591 3323 2324-60

Գ/հմ 5 5 րուպի

Օ. ՍԿԱՐ



ԱՂՐԲԷՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Բազմ. 1920 թ.



Թագաւորի, հարուստների և աղաների իշխանութեան օրով գի-
նեալ երիտասարդութեան կեանքը շատ դառն էր և ծանր: Կեանքի
մութ, կեղտոտ և դարձուտ կողմերն էին նրա փայլը, նրա բաժինը, որովհե-
տե այն բոլորը, ինչ որ լաւ էր, ինչ որ մաքուր էր, ինչ որ գեղեցիկ էր
պատկանում էր հարուստների որդիներին: Աշխարհի բոլոր դարձը գիւղացի
և բանւոր երիտասարդութեանն էր աւած, իսկ բոլոր ուրախութիւնը՝ հա-
րուստներին:

Չար բազրը հալածում էր նրանց նոյնիսկ մինչև նրանց ծնւելը, որով-
հետե բանւոր և գիւղացի կանայք աշխատում էին մինչև ծնւնդկան դառնալու
օրը. նրանք մի բոլոր ազատ ժամանակ չուէին, որպէսզի կատարէին իրանց
մայրական պարտքը: Բանւորների և գիւղացիների երեխաները ծնւում էին
շատ անգամ գործի, աշխատանքի ժամանակ և այս պատճառով նրանցից
շատերը աշխարհ էին գալիս կամ մեռած, կամ ցաւազար:

Գիտնականներն ասում են, թէ ոչ մի թագաւորութեան, ոչ մի երկրի
մէջ այնքան մեռած, կիսամեռ և ցաւազար երեխաներ չեն ծնւում, ինչքան
Ռուսաստանի գիւղացիների և բանւորների մէջ:

Ասենք թէ երեխան աշխարհ եկաւ առողջ և անփառ. բայց ինչ էլ
տալիս նրան բազրը. երեխայի ծնւելուն ամենքն էլ պէտք է ուրախ լինին.
որովհետե երեխան աշխարհիս համար նոր մարդ է, որովհետե երբ ոչ
նա մեծանայ, պիտի ապրի ինչպէս արժան է մարդ արարածին.
Այնպէս որ երեխայի համար չպէտք է խնայել ոչ մի լաւ բան.
Բայց, ցաւօք որտի, միայն հարուստի երեխաների համար էր այսպէս,
իսկ բանւորի և գիւղացու համար նոր երեխայ ունենալը նոր դարտ էր,
նոր հոգս, նոր ցաւ, որովհետե երեխային պահելու, կերակրելու և մեծա-
ցնելու համար բանւորը ոչ պարզապէս ժամանակ ունէր, ոչ էլ փող: Թագա-
ւորը և հագուստ ազաները աշխարհիս երջանկութիւնն ու բազրը խլել էին
բանւորների և գիւղացիների ձեռքից և նրանց կեանքը, նրանց օր ու ա-
բեր խաւարեցրել էին:

Աղքատի երեխան օր չուէր. սիւ պիտի պահպանէր նրան,
երբ որ նրա մայրը ստիպւած էր գնալ աշխատելու, որ մի կտոր սև հաց
հարէ իր և գաւազների համար: Փոքր, մատղաջ հասակից գիւղացու և
բանւորի երեխաները մնում էին տանը անտէր, անխնամ: Բանի քանի երե-
խաներ անբաղդացի էին, ինչքան երեխաներ հիւանդացի էին և մահացել
էին միայն այն պատճառով, որ տանը իրանց վրայ նայող չէ կեղի:

Աղքատների երեխաների համար «ոսկի օրեր» երբէք չեն եղել, որոնց
մտին յիշում է Լ. Տոյստոյը: Բանւորի երեխան ամբողջ կեանքը անց էր
կացնում փողոցներում, անմաքուր բակերում, ցեխի և կեղտի մէջ և այս
պատճառով նա շատ շուտ էր սովորում փողոցային հայոյանքը, փողոցային
փչացած կեանքը:

Մաքուր, գեղեցիկ, կապոյտ երկնքի տեղ բանւորի երեխան տեսնում
էր միայն մի նեղ ծխոտ կամար բարձր տների արանքից. դաշտերի, հան-
դերի և անտառների տեղ նա տեսնում էր միայն խոնաւ խրճիթը և կեղ-
տոտ, փոշոտ փողոցները. անա այս էր բանւորի երեխայի օրը, այս էր նրա
բազրը: Գիւղացու երեխան մի քիչ բազրաւոր էր. նա էլ տանը անպահա-

Խեղճերի երեխաները յորդարու, ուսում աննելու համար ոչ ժամանակ
էին ունենում, ոչ տեղ. հէնց որ նա մի քիչ մեծացաւ, պէտք է գնար աշ-
խատելու, որ ծնողների համար աւելորդ հաց ուտող, աւելորդ բեռ չդառ-
նայ: Աշխատանքն էլ նրանց համար շատ ծանր էր. նրանք, հալածուալ լինե-
լով, աշխատում էին Փոքրիկաներում, գաւոռներում, արհեստանոցներում
և խանութներում: Հասակաւոր բանւորներն իրանք լաւ էին յիշում, թէ ինչ-
պէս իրանք տանջւում էին գործարաններում աշխատելիս: Գործարանատէ-
րերի համար աւելի ձեռնտու էր երեխաների աշխատանքը, ո-
րովհետե երեխաներին փող քիչ էին տալիս, իսկ աշխատեցնում էին
շատ: 9-10 տարեկան հասակից երեխան ինքը իւր աշխատանքով պիտի
պահէր իր զուլիւր: Պատահում էր, որ աւելի փոքր հասակից էին սկսում
աշխատել: Աշխատում էին օրական 12-16 ժամ, առանց հանգստանալու:

Իսկ ինչպէս նրանց ծեծում էին, հայոյում և անպատուում վարպետ-
ները, (ուստաները), խաղէինները, տիրուէինները. մի խօսքով կեանքը նրանց
համար գժողք էր:

Գիւղացի երեխան էլ սկսում էր աշխատել փոքր, մատաղ հասակից:
Ամառը ծանր, դժուար աշխատանք էր կատարում հանդում և այս աշխա-
տանքը շատ փաստակար էր նրա հասակի համար:

Չմեռն էլ ապրում էր նեղ ու մութ, անողջութեան համար փաստա-
կար խրճիթում: Անա այսպէս էր անցնում գիւղացի ջահէլների կեանքը և
նրանցից շատերը մեռնում էին ձաղիկ հասակում: Մեռնում էին գիւ-
ղացի երեխաները և ջահէլները ցրտից, քաղցածութիւնից և ամեն տեսակ
հիւանդութիւններից:

Իսկ եթէ երեխան չէր մեռնում, եթէ նա կարողանում էր դիմանալ
հազար ու մի դրկանքի, այն ժամանակ էլ նրա կեանքը կեանք չէր: Կեանք-
քի բոլոր տարիներում նրա բազրը մեծամեծների, իշխանների ձեռքն էր.
մատաղ հասակից նրան միշտ խրատ էին տալիս, թէ՛ մեծամեծների և իշ-
խանների խօսքը միշտ պէտք է լսես և լուս ու մուսն կատարես նրանց բն-
ւոր հրամանները:

Ասենք թէ երեխային ուսումնարան տարան (ամեն գիւղում ուսում-
նարան չկար, եղածն էլ բանի նման չէր), բայց նա ինչ էր սովորում այն-
տեղ, ցոյց տալիս էին, սովորեցնում էին նրան այն ճանապարհը, որով
նա կարողանար հասնել ազատութեան. ուսումնարանը տալիս էր
արդեօք երեխային այնպիսի ուսում, որ պէտք զար նրան կեանքի մէջ, ու-
սումնարանը սովորեցնում էր նրան այնպիսի բան, որ նա կարողանար ջո-
կել աշխարհի չարն ու բարին և դառնար հասակացող մարդ: Ո՛չ, ո՛չ, այս
բաները չէր տալիս առաջաջ դպրոցը, նա ուրիշ նպատակ ունէր: Կատալա-
րութիւնը, աղաները, կալածատէրերը և տէրտէրները գիւղացի երեխանե-
րի օգտի համար չէին մտածում, այլ ընդհակառակը:

Առաջաջ ուսումնարանում դաստիարակում էին այնպէս, որ երեխա-
ները մեծանալիս դառնային հլու հպատակներ, անլիզու, անմուսնջ, խեղճ
մարդիկ և լուս ու մուսն տանէին ամեն տեսակ զրկողութիւն և անարդա-
րութիւն թագաւորի և մեծամեծների կողմից: Այս նպատակին հասնելու
համար երեխաների գրութը լցնում էին հազար ու մի սուտ բաներով: Տէր-
տէրները երեխաներին պատմում էին դրախտի մասին, պատմում էին
միւս աշխարհի գեղեցիկութեան և ուրախութեան մասին, որ այդ ձեռք երե-

խայի ուշք ու միտքը հեռացնեն այս աշխարհից, որովհետև նրանք հարկադրաբար հեռանալու ստիպուած են: Ուսուցիչներն էլ, կառավարութեանը հակառակ լինելով, երբ խաներին սովորեցնում էին, թէ նրանք «թաղաւորի հպատակներն» են և որարտաւոր են հնազանդ լինել, պատել մեծամեծներին և միշտ գլուխ ծոց մեծամեծների ու ազաների տառջ:

Մն խօսքով ուսումնարանը նոյնպէս մտնում, փշօցնում և բխօցնում էր երեխաների սիրտն ու հոգին, ինչպէս նրանց դժար ապրուստը մեռցնում էր նրանց մարմինը:

Փետրաբի յեղափոխութիւնը և բանուտ երիտասարդութիւնը. Երիտասարդ բանուտների միութիւններ կազմելը.

Փետրաբի յեղափոխութիւնը թէև տապալեց, հնուցրեց թագաւորին և նրա կառավարութիւնը, բայց ջահէլ բանւորներին կատարեալ ազատութիւն չտւեց: Հողատէրերից և դաւաճան սոցիալիստներից (ինչպէս Կերենսկին) կազմած կառավարութիւնը աւելի շատ մտածում էր այն մասին, որ ստիպէ ուսու ժողովրդին շարունակել ձանձրալի պատերազմը, իսկ այդ ժողովրդի օգտի մասին երբէք չէր մտածում: Փաբրիկաները և գործարանները դեռ ևս մնում էին Փաբրիկանների և դաւաճիչների ձեռքը, իսկ հողը հողատէր ազաների ձեռքից չէր դուրս եկել և գիւղացուն չէր տրւում: Միակ բանը, որ յաջողեց բանւորներին խլել խաղէիներէրց, դա օրական 8 ժամ աշխատելու իրաւունքն էր (8 ժամաւ բանւորական օր), որի մասին յայտարարեց բանւորների պատգամաւորների Սորհուրդը, թագաւորին գցելուց յետոյ, անմիջապէս Այս իրաւունքն էլ բուրժուազիան աշխատում էր յետ խլել, գողոհելով բանւորների դէմ գիւղացիներին և զինւորներին և աշխատելով թշնամացնել նրանց իրար հետ:

Բայց փետրաբի յեղափոխութիւնը տւեց մի մեծ իրաւունք: Չահէլ բանւորները հնարաւորութիւն ստացան հաւաքել, ազատ կերպով ժողովներ անել և խօսել շատ պէտքոկան հարցերի մասին: Թագաւորի օրով այս բանը հնարաւոր չէր, որովհետև ամեն մի ազատամիտ խօսքի համար, ամեն մի ժողովի կամ խորհրդի համար թագաւորի ժանդարմները բռնում էին երիտասարդ բանւորներին և դնում էին բանդ: Թագաւորին հեռացնելուց յետոյ երիտասարդ բանւորները սկսեցին շարունակ ժողովներ անել, հաւաքւել և ամեն տեղ կազմեցին երիտասարդ բանւորների միութիւններ: Երիտասարդ բանւորները հասկանում էին, որ հարուստների և ազաների դէմ կռիւը դեռ նոր է սկսւում, նրանք հասկանում էին, որ այդ կռիւ համար հարկաւոր է միաձայն, կազմակերպւել և հաստատել մի միտքան և եղբայրական ընկերութիւն: Այս բանը երիտասարդ բանւորները կարող էին անել իրանց կազմած Միութիւններով:

Այս միութիւնները շատ գեղեցիկ նպատակներ ունէին կատարելու: Նրանց առաջին նպատակն այն էր, որ լուսաւորէին բանւորների միտքը և հասկացնէին նրան, թէ ով է նրա թշնամին և ովքեր են նրա բարեկամները, ուրիշ խօսքով ասած՝ զարգացնել երիտասարդ բանւորների դասակարգային գիտակցութիւնը: Միութիւնների նպատակն է ամեն տեղ աշխատել խօսել և քարոզել, յեղափոխութիւնը և սօցիալիզմը տարածելու համար: Ուրիշ խօսքով ասած՝ միութիւնները բանւորների մէջ տարածում էին կարը Մարքսի մտքերը և նրա ուսուցումը, որը միայն ապիս է բանւորներին

ազատութիւն: Միութիւնը հասկացնում էին ջահէլ բանւորներին, թէ հասակաւոր բանւորները ինչպէս համար են կուռւմ հարուստների դէմ, և կանչում էին երիտասարդ բանւորներին, որ նրանք զան, միանան և օգնեն հասակաւոր ընկերներին: Ահա այսպիսի գործունէութեան համար երիտասարդ բանւորների միութիւնները կոչւեցան երիտասարդ բանւորների Սօցիալիստական միութիւններ:

Բացի դրանից, միութիւնների նպատակն էր պաշտպանել երիտասարդ բանւորների նիւթական շահերը և իրաւունքները. այսինքն նրանք կուռւմ էին այն բանի համար, որ մատաղահաս և երիտասարդ բանւորները օրական 6 ժամից աւել չ'բանէին, որ նրանց աշխատանքը ծանր և դժւար չ'լինէ և նրանց աշխատանքի վարձը քիչ չ'լինի: Միութիւնները այս բոլոր նպատակներին հասնելու համար կուռւմ էին խաղէիների և հարուստների դէմ հասակաւոր բանւորների արհեստաւորական միութիւնների հետ խօսք մէկ արած, միաբանւած: Հարկաւոր էր կուռել երկար ժամանակ և խիստ, հարկաւոր էր սարքել գործադուլներ, (զարաստովկա), երիտասարդ բանւորների նիւթական դրութիւնը լաւացնելու համար: Փաբրիկանները և խաղէիները միայն այն ժամանակ էին խօսքի և խղճի գալիս, երբ որ էլ հակառակ գնալու ոչ մի հնարաւորութիւ չէին ունենում:

Միութիւնները մտածում էին նաև երիտասարդ բանւորների լուսաւորութեան մասին: Նրանք այդ նպատակին հասնելու համար հաւաքում և կազմում էին առանձին խմբեր, բաց էին անում ուսումնարաններ, գրել-կարդալ սովորեցնելու համար, տալիս էին դասախօսութիւններ, մի խօսքով միութիւնները ամեն կերպ աշխատում էին երիտասարդ բանւորների մէջ տարածել լոյս և գիտութիւն: Իհարկէ Կերենսկու կառավարութեան օրով այս բաներն անել շատ դժւար էր, որովհետև միութիւնները չուէին փող, չուէին շինութիւններ, չուէին ոչ ուսուցիչներ, ոչ դասախօսներ և ոչ էլ լաւ գրքեր: Այս բոլորը, ինչպէս առաջ, բուրժուազիայի ձեռքն էր և միայն նրանց որդոց համար էր:

Չնայած այս դժւարութիւններին, երիտասարդ բանւորների միութիւններն սկսեցին կազմել արագ կերպով Ռուսաստանի շատ քաղաքներում: Միութիւններ կազմակերպում էին իրանք երիտասարդ բանւորները, որովհետև նրանք իրանց ազատութեան և բազաւորութեան յոյսը դրել էին այդ միութիւնների վրայ:

Երիտասարդ բանւորների կեանքը փոխւեց դէպի լաւը, այդ կեանքը այժմ առաջւայ պէս ծանր և դառն չէ, որովհետև երիտասարդ բանւորներն այժմ ունեն իրանց սեպհական միութիւնները, որոնց օգնութեամբ նրանք կաժող են սովորել, զարգանալ և իրանց հալածողների, իրանց զրկողների դէմ կռիւ մղել:

Ինչ օգուտ սւեց հոկտեմբերեան յեղափոխութիւնը երիտասարդ բանւորներին և գիւղացիներին.

Ռուս գիւղացիների և բանւորների համբերութեան բաժակը 1917 թ. հոկտեմբերին արդէն լցւել էր: Չորս տարւայ արիւնահեղ կռիւներից յոգնած, տանջւած, քաղցած՝ նոքա էլ համբերել չէին կարող, ուստի վճռեցին վերջ տալ բուրժուազիայի և ազաների կառավարութեանը և իշխանութիւնն

և այն, որ նրանք վախենում էին ամեն մի նստվորեց- նում և կատարում էր երիտասարդութիւնը և իւր

Միութիւնների շասանադր, Հարևանական հարևանադուստր և Ռուսաստանի մի ընդհանուր Երիտասարդական Կոմունիստական Միութիւն կազմելը.

Միութիւնները քանի շատանում էին, քանի աւելանում էր նրանց գործը, այնքան աւելի զգալի էր դառնում մի պահանջ—միացնել նրանց և դարձնել մի մեծ և ուժեղ Միութիւն: Այս նպատակով 1918 թ. հսկտեմբերին Մոսկուայի և Պետրոգրադի միութիւնները առաջին անգամ նշանակեցին բանւոր և գիւղացի երիտասարդական միութիւններին համագումար: Այս համագումարին մասնակցում էին 20.000 երիտասարդ բանւորների և գիւղացիների ներկայացուցիչներ: Համագումարում բոլոր երիտասարդական կազմակերպութիւնները միացան և կազմեցին Ռուսաստանի երիտասարդական Կոմունիստական Միութիւնը: Այս համագումարում ընդունուեց Միութեան ծրագիրը և կանոնադրութիւնը և ընտրուեց կենտրոնական կոմիտէ: Այս միութիւնը այժմ էլ կայ. նրա կազմակերպութիւնները և ճիւղերը տարածւած են այժմ Խորհրդային Ռուսաստանի բոլոր տեղերում. նրանց թիւը այժմ հասնում է 1¹/₂ հազարի մօտ հարիւր հազար անդամներով:

Ի՞նչ բան է Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմունիստական Միութիւնը.

Այժմ տեսնենք, թէ Ռուսաստանի երիտասարդութեան Կոմունիստական Միութիւնն ի՞նչ գործ է կատարում, ի՞նչ նշանակութիւն ունի նա գիւղացի և բանւոր երիտասարդութեան համար և ինչո՞ւ պիտի այդ երիտասարդութիւնը զուրի այդ միութիւնների մէջ և աշխատի նրանց համար:

Ո՞վ կարող է մտնել Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմունիստական Միութիւնների մեջ.

Ռուսաստանի երիտաս. Կոմունիստական Միութիւնը միացնում է բանւոր և գիւղացի երիտասարդներին—14-ից մինչև 23 տարեկան հասակը: Ամեն մի երիտասարդ բանւոր և գիւղացի կարող է գրել այդ Միութեան անդամ և աշխատել այնտեղ: Անդամ գրելու համար հարկաւոր չէ ոչ մի երաշխաւորութիւն, հարկաւոր է միայն աշխատելու և գործելու ցանկութիւն: Ռուսաստանի երիտաս. Կոմունիստական Միութեան անդամ գրողները ոչնչով չեն տարբերւում միւս բանւոր և գիւղացի երիտասարդներից, բացի այն, որ նրանք ուզում են սովորել, լուսաւորել և նոր, մարդավայել կեանքով ապրելու արժանի լինել:

Այնպէս որ ամեն-մի եռանդուն, աշխատասէր և ընդունակ երիտասարդ, որ միայն իւր մասին չի մտածում, պէտք է մտնի Ռուսաստանի երիտասարդութեան Կոմունիստական Միութեան շարքերը:

Ռուսաստանի երիտասարդութեան Կոմունիստական Միութեան դանբը բաց են նաև այն ինտելլիգէնտ երիտասարդների (աշակերտների) համար, որոնք պատրաստ են պաշտպանել բանւոր դասակարգի շահերը և աշխատել երիտասարդ պրօլետարների հետ ձեռք ձեռքի տւած և ազնիւ կերպով:

Այդպիսի ընկերներին մենք ընդունում ենք մեր Միութեան մէջ և նրանք նոյնպիսի անդամներ են մեզ համար, ինչպէս երիտասարդ բանւորները և գիւղացիք: Իսկ այն աշակերտներին, որոնք կ'գան մեզ մօտ միայն անդամութեան տոմսակ ստանալու և որևէ տեղ դառնելու համար, մենք չենք կարող ընդունել: Իսկ նա, ով ազնիւ է, ողջունում է ապագա նոր կեանքը, կարող ընդունել: Իսկ նա, ով ազնիւ է, ողջունում է ապագա նոր կեանքը, եւ պատրաստ է ամեն ընդմեջ մեզ հետ միասին կուրել յեղափոխութեան համար, այդպիսին միշտ կարող է մտնել մեր՝ Ռուսաստանի երիտասարդութեան Կոմունիստական Միութեան մէջ և աշխատել: պրօլետար երիտասարդների հետ միասին:

Ի՞նչ նպատակ է դրել Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմունիստական Միութիւնը.

Մեծ կոխ է մղում Ռուսաստանում. բանւորները և գիւղացիները կուրում են իրանց դարւոր կեղեքիչներին—կապիտալիստների, կալւածատէրերի և գնեւերալների դէմ և պաշտպանում են 1917 թ. ձեռք բերւած ժողովրդական աշխատաւորական իշխանութիւնը: Եթէ բուրժուազիան դուրս գայ յաղթող, այն ժամանակ բանւորների և գիւղացիների համար շատ վատ կլինի: Նորից կսկսւի ստրկութիւնը, նորից կտիրէ խաւարը և կնչնչանան ազատութեան և լուսաւոր կեանքի բոլոր յոյսերը: Իսկ եթէ յաղթող դուրս գան բանւորները և գիւղացիները, այն ժամանակ հնարաւոր կլինի բանեկ կերպով սկսել նոր և ազատ կեանք ստեղծել, այն ժամանակ կ'սկսեն հանգիստ կերպով սկսել նոր և ազատ կեանք ստեղծել, այն ժամանակ կ'սկսեն բանեկ Ֆարբիկաներն ու գործարանները, կ'սկսէ յաջող կերպով աշխատել երկաթուղին, կրեւեն նոր մեքենաներ, հաց, շոր, ռանաւան, մի խօսքով ամեն բան կլինի լիովի, չեն լինի այլ ևս ոչ աշքատներ, ոչ հարստահարդներ. բոլորն էլ աշխատելու են, բոլորն էլ լինելու են հաւասար: Ռուսաստանի գիւղացիները և բանւորները այս գործում մենակ չեն, նրանց հետ են հէնց այժմ միւս բոլոր երկրների չքաւորները: Նրանք էլ ուզում են կանոնաւոր և ազատ կեանք ունենալ, նրանք էլ արդէն սկսում են կոխ իրանց նոնաւոր և ազատ կեանք ունենալ, նրանք էլ արդէն սկսում են կոխ իրանց կապիտալիստների, բոլոր հարստաների և գնեւերալների դէմ: Ռուսաստանի Կոմունիստական Միութեան նպատակն է բացատրել և հասկացնել բանւոր և գիւղացի երիտասարդութեան, թէ ինչ է կատարւում այժմ Ռուսաստանում և միւս երկրներում: Նա բացատրում է թէ ինչո՞ւ համար այժմ տեղի ունի կոխ աղքատների և կապիտալիստների մէջ, որի՞ կողմն է արդարութիւնը և ով կլինի այս կուրում յաղթողը: Միութիւնը կոչ է անում բանւոր և գիւղացի երիտասարդութեանը հետոն չը կանգնել և չասել, թէ յղա մեր գործը չէ՞, այլ հարկաւոր է մասնակցել այս կուրին և օգնել հասակաւոր բանւորներին և գիւղացիներին, որպէսզի պաշտպանեն յեղափոխութիւնը և յաղթենք մեզ հարստահարդներին:

Բայց, որպէսզի ստեղծենք աշխատատեղերն ՚նոր կեանք, անկր-
թեշտ է, որ լինենք բանիմաց, գիտակից և լուսավորած:

Իծրադրաբար հէնց այստեղ է մեր թիւութիւնը, սա է մեր պակասու-
թիւնը: Մենք արդէն ասացինք, թէ ինչ ծանր պայմաններում էր պարու-
աշխատուոր երիտասարդութիւնը հին օրէնքների ժամանակ, ինչպէս
խաւար էին պահում նրա միտքը, ինչպէս հեռու էին պահում նրան
լոյսից և գիտութիւնից: Մինչդեռ հէնց ինքը բանուոր և գիւղացի երիտա-
սարդութիւնն է, որ պէտք է ստեղծէ նոր ազատ կեանք, նա մենակ է կա-
տարելու այս գործը: Պարզ է, ուրեմն, որ գիւղացի երիտասարդութիւնը
այժմ չպէտք է քնի, չպիտի ծուլանա, այլ պէտք է լրացնէ իւր գիտութեան
պաշարը, զարգանայ, լուսավորւի և ընդհանուր աշխատուորական ընտանի-
քի օգտակար անդամ դառնայ: Ռուսաստանի Երիտասարդութ. կոմմու-
նիստական Միութիւնը նպատակ է դրել օգնել նրան կատարել այս
գործը:

Մենք արդէն ասացինք, որ Խորհրդային Իշխանութիւնը ամեն միջոց
գործ է զնում, որպէսզի բարելաւէ երիտասարդ բանուորութեան գրութիւնը:
Նա պահպանեցրել է երիտասարդների աշխատանքի ժամանակամիջոցը Փաբ-
րիկաներում, դարձնելով այդ միջոցը 4 և 6 ժամ. նա արգելել է երիտա-
սարդների գիշերային և տեւական աշխատանքները. նա հիմնում է երիտա-
սարդութեան համար դպրոցներ, կլուբներ: Բայց այս բոլոր միջոցները դեռ
բոլոր տեղերում գլուխ չեն բերած: Այս բանը բացատրում է մասամբ
նրանով, որ ինքը երիտասարդութիւնը անտարբեր է դէպի իւր շահերը:
Այսպիսի վերաբերմունքը հիմքից պէտք է փոխել: Երիտասարդ բանուորու-
թիւնը ինքը պէտք է օգնէ Խորհրդային Իշխանութեան պլուխ բերել նրա
դրութեան բարելաման գործը: Այս բանը ախրան էլ դժւար չէ. հարկաւոր
է միայն լաւ կազմակերպել և ցանկութիւն ունենալ աշխատելու: Օգնել
երիտասարդութեանը այս գործում—կազմում է Ռուսաստանի Երիտասարդ-
կոմմունիստական Միութեան նպատակը:

Նա դեռ ևս շատ անելիքներ ունի. բայց նրանք բոլորն էլ մի նպա-
տակի են ձգտում, այն է՝ սովորեցնել բանուոր և գիւղացի երիտասարդու-
թեան, որ նա հասկանայ կեանքը, լուսավորել նրա միտքը և նրանից պատ-
րաստել տոկուն, հաստատուն և գիտակից գործիչներ ապագայ աշխատուոր
հասարակութեան համար:

Ի՞նչու հաւատ Միութիւնը կոչում է կոմմունիստական.

Մենք խօսեցինք այն կուլի մասին, որ ներկայումս վարում են բան-
ուորները և գիւղացիք նոր, ազատ կեանք ունենալու համար: Մենք ասում
ենք, որ բանուոր և գիւղացի երիտասարդութիւնը պէտք է որատրաստւի,
որպէսզի կարողանայ ստեղծել այդ կեանքը, որպէսզի նա դառնայ բան-
ուորական ընդհանուր ընտանիքի օգտակար անդամ: Այս աշխատուոր ընտա-
նիքը, որի մէջ չեն լինի ոչ ճնշողներ, ոչ ճնշուողներ, ոչ հարուստներ, ոչ
աղքատներ, կոչում է կոմմունիստական հասարակութիւն: Ստեղծել այդ-
պիսի հասարակութիւն—նշանակում է ստեղծել նոր, կոմմունիստական
կեանք: Կուլի այդպիսի կեանքի համար—նշանակում է կուլել կոմմունիզ-
մի համար: Ահա այս կելին է, որ մղում են այսօր ամբողջ աշխարհի
բանուորները և չքատրները:

Մեր Միութիւնը կոչում է կոմմունիստական, որովհետեւ նա բանուոր և
գիւղացի երիտասարդութեան մէջ քարոզում է կոմմունիզմ, այսինքն այն-
պիսի վարդապետութիւն, որ ցոյց է տալիս ուղիղ և աշխատուորական կեան-
քի ճանապարհը, որովհետեւ կոչ է անում նրան մասնակցել կոմմունիզմի
կուլին, այսինքն՝ նոր, աշխատուորական կեանքի կուլին:

Վատ է արդեօք, որ մեր Միութիւնը կոչում է Կոմմու-
նիստական Միութիւն: Ո՞չ, ընդհակառակը, մենք պէտք է պարծե-
նանք այդ անունով: Ո՞վքեր են կոմմունիստները: Կոմմունիստները բոլոր
երկրների բանուորներն ու աղքատներն են, որոնք կուլում են և արիւն են
թափում բոլոր ազգերին նոր, ազատ կեանք տալու համար: Ո՞ւմ են բանու-
ղնում, ո՞ւմ են կախում, ո՞ւմ են գնդակահարում, ո՞ւմ են զրպարտում կալ-
ւածատէրերը, հարուստները և գեներալները բոլոր երկրներում. իհարկէ—
կոմմունիստներին: Կոմմունիստներն ընդհանուր գործի համար կուլողներն
են, մարդիկ, որոնք պատրաստ են ընդհանուր գործի համար զոհել ամեն
բան, ինչ որ ունեն:

Մեզ կարող են ասել, թէ շատ կոմմունիստներ կան, որ բոլորովին
այն չեն, ինչ որ մենք ենք նկարագրում: Մենք սրան կը պատասխանենք
ժողովրդական այն խօսքով, թէ հօտը (սուրու) ատանց արատաւոր ոչխարի
չի լինի: Բայց մենք չենք թոյլ տայ, որ այդ արատաւոր ոչխարները
փչացնեն ամբողջ հօտը: Նրանց, որոնք միայն անունով են կոմմունիստ,
իսկ գործով հակառակը, այդպիսիներին իսկական կոմմունիստները իրանց
բարեկամ չեն համարում և գուրս են քշում իրանց ընտանիքից, իրանց
կուսակցութիւնից: Երիտասարդութեան կոմմունիստական Միութիւնը
պէտք է դաստիարակէ և բանուոր ու գիւղացի երիտասարդութիւնից պատ-
րաստէ աշխատուոր ժողովրդի բարոյութեան և ազատութեան համար գի-
տակից և ազնիւ կուլողներ:

**Ո՞վ է գործում Ռուսաստանի Երիտասարդութեան կոմմունիստական
Միութեան մէջ.**

Ինչպէս տեսնք, Ռուսաստանի Երիտասարդութեան կոմմունիստական
Միութեան անելիքները շատ են: Իրագործել այդ բոլորը նա կարող է
միայն այն ժամանակ, երբ նրա անդամները, այսինքն բանուոր և գիւղացի
երիտասարդները իրանք աշխատեն սրտանց, ատանց ստիպելու, և չծու-
լանան երբէք: Երիտասարդութիւնը պէտք է գիտենայ, որ իրեն համար
լանան իր բոլոր շատ չկայ: Ամեն մարդ պէտք է աշխատի ոչ միայն իր՝
ուրիշ աշխատող շատ չկայ: Մենք կանչում ենք բանուոր և գիւղացի ե-
այլ և բոլորի համար: Մենք կանչում ենք բանուոր և գիւղացի ե-
րիտասարդութիւնը մեր Միութեան մէջ նրա համար, որ նա ինքը այս-
տեղ աւտիւ կերպով աշխատի:

Ո՞րտեղ և ինչպէս կարող է գործել բանուոր և գիւղացի երիտասար-
դութիւնը Ռուսաստանի Երիտասարդութեան կոմմունիստական Միութեան
մէջ: Ամբողջ Միութիւնը կազմակերպւած է այնպէս, որ ուր էլ որ նա-
ես, ամեն տեղ Միութեան անդամներից պահանջում է աւտիւ աշխա-
տանք: Առանց այդ աշխատանքի Ռուսաստանի Երիտասարդութեան կոմ-
մունիստական Միութիւնը չի կարող գոյութիւն ունենալ:

Ակումբների շինութիւնը պէտք է լինի մեծ, մաքուր և աղմուկից հե-
ռու: Մաքրութեան մասին հոգս են քաշում իրանք ահումբի անդամները:
Ակումբներում պէտք է լինի էթանագին բուֆետ, թէյով: Պէտք է այնպէս
անել, որ երիտասարդութիւնը այստեղ գայ ոչ միայն սովորելու այլ և
ժամանակ անցկացնելու համար:

**Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմմունիստական Միութեան ար-
տասակումը քիմ գործերը.**

Բացի ահումբային աշխատանքը, Միութիւնը երիտասարդութեան
համար կազմակերպում է միտինգներ, ցոյցեր և հանգէսներ: Միտինգնե-
րում երիտասարդութիւնը տեղեկութիւն է նստում ներկայ գրութեան
մասին, իմանում է, թէ ինչ է կատարում աշխարհում և ճիշտ կերպով
բացատրում է բաները և գիւղացի երիտասարդութեան նպատակները:

Միտինգներում բոլոր երիտասարդութեանը կոչ են անում մտնել երի-
տասարդութեան Կոմմունիստական Միութեան մէջ: Ցոյցերը կազմակերպ-
ւում են, երիտասարդ սյժը նրա և կազմակերպւած լինելը ցոյց տալու համար:

Միութիւնը հիմնում է երիտասարդութեան համար զանազան
դպրոցներ և կուրսեր: Առաջին հերթին բաց են անում գրագիտութեան
դպրոցներ, որովհետեւ Միութիւնը առհասարակ պէտք է կուի անգրագի-
տութեան դէմ:

Բացում են նաև քաղաքական գրականութեան կուրսեր, որտեղ երի-
տասարդութիւնը ստանում է քաղաքական կրթութիւն և զարգացում: Միւթ-
բաց է անում նաև ուրիշ օգտակար կուրսեր՝ նկարչութեան, կար ու ձևի,
գլեղատնտեսական և այլն: Այս բոլորը Միութիւնն անում է բանտրու-
թեան միւս կազմակերպութիւններին, բուսաւորութեան բաժանմունք-
ների, կոմմունիստական կուսակցութեան և արհեստակցական միութիւն-
ների հետ միասին:

Ռուսաստանի երիտասարդութեան Կոմմունիստական Միութիւնը
հոգս է տանում նաև երիտասարդութեան ֆիզիքական զարգացման վրայ:
Այս նպատակով նա կազմակերպում է զանազան խաղեր և զուարճալիքներ:
Երիտասարդութիւնը սովորում է մարմնամարզութիւն, ֆուտբոլ, լողալ,
սահել և այլն: Այս բոլորը անհրաժեշտ է, որովհետեւ երիտասարդութիւնը
պէտք է ուժեղ լինի ոչ միայն հոգով, այլ և մարմնով:

Ռուսաստանի երիտասարդութեան Կոմմունիստական Միութիւնը
պաշտպանում է բանտր երիտասարդութեան տնտեսական շահերը և աշ-
խատանքը: Այս նպատակով նա տեղեկութիւններ է հաւաքում երիտասար-
դութեան գրութեան մասին, գործադրում է 4 և 6 ժամայ բանտր. օրէն-
քը, հետևում է, որ Սորհրդային Իշխանութեան այս մասին հրատարակւած
զեկրետները գործադրեն ճշտութեամբ: Այս բոլորը անում են Տնտեսա-
կան-իրաւական մասնաժողովները, որոնք ընտրւում են բանտր երիտասար-
դութեան կողմից և գործում են նրա օգնութեամբ:

Միութեան մէջ երիտասարդութիւնը սովորում է ղինավարժութիւն:
Այժմ ամեն մի երիտասարդ բանտր և գիւղացի պարտաւոր է գիտենալ
հրացան բանեցնել, պարտաւոր է գէնքը ձեռին պաշտպանել իւր շահերն և
իրաւունքը հողատէրերից, ազաներից և գեներալներից:

Ահա մօտաւորապէս սա է Ռուսաստանի երիտասարդութեան Կոմ-
մունիստական Միութեան գործունէութիւնը: Որպէսզի այդ գործունէութիւ-
նը յաջող կերպով գնայ, Միութիւնը ունի իւր ներկայացուցիչները: Սոր-
հրդային հրահարկութիւնների մէջ և Արհեստակցական Միութիւններում:
Այդ ներկայացուցիչները ոչ միայն պաշտպանում են այնտեղ երիտասար-
դական Միութեան շահերը, այլ և մասնակցում են ընդհանուր աշխատան-
քին և փորձառութիւն ձեռք բերում:

ԽՆԳԻՆ Ե ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՌՈՍԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ.

Ռուսաստանի երիտասարդութեան Կոմմունիստական Միութիւնը կա-
ռավարւում է երիտասարդութեան ձեռքով, իւր ընտրած օրգանների մի-
ջոցով: Ամեն մի քաղաքում, քաղաքային թաղամասերում, կամ գիւղում,
երիտասարդութեան ընդհանուր ժողովը ընտրում է Միութեան Կոմիտէ,
որը և կառավարում է բոլոր գործերը: Կոմիտէներն ընտրւում են որոշ
ժամանակով և պատասխանատու են ընդհանուր ժողովի առջև: Նրան օգ-
նելու համար ընտրւում են զանազան կոմիտէներ: Եթէ քաղաքը մեծ է,
ինչպէս Մոսկվա, Պետրոգրադ, ապա հրաւիրւում է քաղաքային թաղա-
մասերի ներկայացուցիչներին քաղաքային ընդհանուր ժողով, որը և ըն-
տրւում է ընդհանուր քաղաքային կոմիտէ, որ ղեկավարում է գործը ամ-
բողջ քաղաքում: Այս կոմիտէն նոյնպէս ընտրւում է որոշ ժամանակով:

Ամբողջ գաւառի գործունէութիւնը միացնելու, կենտրոնացնելու հա-
մար որոշ ժամանակներում գումարւում են երիտասարդական կազմակեր-
պութիւնների ներկայացուցիչների ժողովներ: Այդ ժողովում ընտրւում է
գաւառական կոմիտէ, որը կառավարում է գործերը գաւառում: Նոյնը կա-
տարւում է նահանգում: Նահանգական ժողովներում ընտրւում է նահան-
գական կոմիտէ, որ ղեկավարում է գործը ամբողջ նահանգում: Բայց
Ռուսաստանի երիտասարդութեան Կոմմունիստական Միութեան կազմա-
կերպութիւնները ցրւած են ամբողջ Ռուսաստանում: Ուստի ամբողջ աշ-
խատանքին մի ընդհանուր ուղղութիւն տալու, այդ աշխատանքի գործա-
գրութեան հսկելու և սխալները վերացնելու համար, տարին մի անգամ
գումարւում է բոլոր կազմակերպութիւնների Համառուսական Համագու-
մար: Այդ համագումարում ընտրւում է Ռուսաստանի երիտասարդութեան
Կոմմունիստական Միութեան Կենտրոնական կոմիտէ, որը ղեկավարում է
ամբողջ Միութեան գործը:

**Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմմունիստական Միութիւնը և
Երիտասարդ Բանտրութեան Կազմակերպութիւնները ուրիշ երկր-
ներում. — Կոմմունիստական Երիտասարդութեան Կոմմունիստական
Ինտերնացիօնալը.**

Միայն Ռուսաստանում չէ, որ գոյութիւն ունեն երիտաս. Միութիւն:
Նրանք դեռ մի քանի տասնեակ տարի առաջ գոյութիւն ունէին Արևմուտ-
քում — Գերմանիայում, Աւստրիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Ֆրան-
սիայում, Իտալիայում և այլ երկրներում: Երիտասարդ բանտրութիւնը

միացնելու և դաստիարակելու համար նրանք կատարել են մեծ աշխատանք: Բոլոր Միութիւնները ունէին սօցիալիստական Երիտասարդական կազմակերպութիւնների Միջազգային բիւրօ, որը ղեկավարում էր ամբողջ աշխատանքը և շարժումը:

Երբ պատերազմը սկսեց, Բանուր Երիտասարդութեան Միութիւնները Արևմուտքում և Միջազգային Բիւրօն կտրուկ կերպով բողոքեցին նրա դէմ և կոչ արեցին բանւոր երիտասարդութեանը, կռիւ մղել բուրժուազիայի դէմ: Այս պատճառով Միութիւններն սկսեցին հալածուել և շատ երիտասարդներ փչացան բանտերում:

Այժմ համարեա բոլոր Միութիւնները գործում են անլէզու, գաղտնի և աշխատում են համաշխարհային յեղափոխութիւն տալը բերելու համար: Միջազգային Բիւրօի անդամներն էլ մտածք նստած են բանտերում, մասամբ ստիպած են ազրել թաղնւած:


Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմմունիստական Միութիւնը կազմում է Երիտասարդութեան Միջազգային Կոմմունիստական շարժման մի մասը: Բոլոր երկրների աշխատաւոր երիտասարդութեան շտեկերը միատեսակ են: Այս պատճառով Ռ. Ե. Կ. Միութիւնը միւս երկրների կազմակերպութիւնների հետ միասին ձգտում է ստեղծել Երիտասարդութեան Կոմմունիստական Խնտերնացիօնալ, որը միացնէր ամբողջ աշխարհի աշխատաւոր երիտասարդութիւնը: Այդ Կոմմունիստական Խնտերնացիօնալի մի մասն է կազմում և Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմմունիստական Միութիւնը:

Բանուր եւ գիտալստի երիտասարդներ, մեկ՛ն Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմմունիստական Միութեան շարժեր:

Մենք սասցինք, թէ առաջ ինչպէս էր ապրում բանւոր և զիւղացի երիտասարդութիւնը: Մենք ցոյց տւինք, թէ երիտասարդութեան ինչ տւեց Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը: Մենք բացատրեցինք, թէ ինչ բան է Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմմունիստական Միութիւնը, ինչ նպատակներ ունի նա և ինչպէս է գործում: Մենք մասնանշեցինք, որ բանւոր և զիւղացի երիտասարդութեանն անհրաժեշտ է մասնակցել այն կռիւն, որ մղում են այժմ հասակաւոր բանւորները և զիւղացիք:

Ի՞նչ եզրակացութեան պէտք է գալ այս բոլորից:
Երիտասարդ բանւորը և զիւղացին կարող են երես զարձնել այս բոլորից և առել. «Իմ գործը չէ դա, ես աննշան, փոքր մարդ եմ»:

Ո՛չ և ո՛չ.
Այժմ քնելու ժամանակ չէ. ամենքն էլ պէտք է աշխատեն, այն ամենը, ովքեր ազնիւ են, ովքեր ուզում են ապրել նոր կեանքով, ովքեր անիծում են խաւարը և ազիտութիւնը, ովքեր պատրաստ են կռւել յաղթանակի համար,—այդ բոլորը թող մտնեն Ռուսաստանի Երիտասարդութեան Կոմմունիստական Միութեան շարքերը: Այդ բոլորը թող մտնեն կոմմունիզմի կարմիր դրօշակի տակ, աշխատաւորական նոր, ազատ, կեանքի ստեղծագործական կռիւ համար:



2013

«Ազգային գրադարան»



3358

NL0036879

